ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«17» դեկտեմբերի 2014թ.

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Վարդաղբյուր
Հեռ.՝ 098-43-83-22; 098-65-54-48

№ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ թիվ 11-Ա, 12-Ա, 13- Ա, 14-Ն և 15-Ն որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼՈՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 4002-14
17. 12. 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ա

«02» դեկտեմբերի 2014 թվական գյուղ Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուր համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 15,87%-ի չափով՝ 105000 (մեկ հարյուր հինգ հազար) դրամ, բարձր լեռնային հավելում՝ 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 113000 (մեկ հարյուր տասներեք հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուր համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուր համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին» թիվ 9 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Թոսունյան՝ կողմ

Ա.Թոսունյան՝ կողմ

Դ.Խաչատրյան ՝ կողմ

Ա.Սարգսյան ՝ կողմ

Մ.Բալոյան ՝ կողմ

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***Սարգիս Բալոյան***

«04» դեկտեմբերի 2014թ.

գյուղ Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Վարդաղբյուրի համայնք

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«02» դեկտեմբերի 2014 թվական գ.Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 3 /երեք/:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 10 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Թոսունյան՝ կողմ

Ա.Թոսունյան՝ կողմ

Դ.Խաչատրյան՝ կողմ

Ա.Սարգսյան՝ կողմ

Մ.Բալոյան՝ կողմ

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***Ս.Բալոյան***

«04» դեկտեմբերի 2014թ.

գ. Վարդաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Վարդաղբյուրի համայնքի ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 02-ի թիվ 12-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Բարձր լեռնային հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ								
1	Աշխատակազմի քարտուղար	1	80000	76,19	1	80000	8000	88000
2	Առաջատար մասնագետ	1	79000	75,23	1	79000	8000	87000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ								
3	Հավաքարար	1	70822	67,44	0,5	35411	8000	43411
Ընդամենը		***3***	***229822***		***2,5***	***194411***	***24000***	***218411***

ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԲԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Վարդաղբյուրի համայնք

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ա

«02» դեկտեմբերի 2014 թվական գ.Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի սեփականության 2014 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Թոսունյան՝ կողմ

Ա.Թոսունյան՝ կողմ

Դ.Խաչատրյան՝ կողմ

Ա.Սարգսյան՝ կողմ

Մ.Բալոյան՝ կողմ

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***Ս.Բալոյան***

«04» դեկտեմբերի 2014թ.

գ. Վարդաղբյուր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի
ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 02-ի
թիվ 13-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(առ. 31.12.2014թ.)

1	Չիրկիզվող պահարան	1 հատ	
2	Աշխատանքային գրասեղան	1 հատ	
3	Աթոռ	4 հատ	
4	Էլ. հաշվիչ	1 հատ	
5	Համակարգիչ cpu G 1610 ram 20	1 հատ	131000 դրամ
6	Տպիչ Canon MF3010 31N1	1 հատ	70000 դրամ
7	Keybord Genius KB 110	1 հատ	3000 դրամ
8	Monitor LG 1942	1 հատ	50000 դրամ
9	Մկնիկ Genius 120	1 հատ	3000 դրամ
10	Կամերային գրանցող սարք	1 հատ	60000 դրամ
11	Տեսախցիկ Multistar	1 հատ	50000 դրամ
12	Հիշողության սարք WD	1 հատ	53000 դրամ
13	Լարեր, այլ մանր սարքեր	1 հավաքածու	57000 դրամ

ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Վարդաղբյուրի համայնք

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ն

«02» դեկտեմբերի 2014 թվական գ.Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 14-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 14-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Թոսունյան՝ կողմ

Ա.Թոսունյան՝ կողմ

Դ.Խաչատրյան՝ կողմ

Ա.Սարգսյան՝ կողմ

Մ.Բալոյան՝ կողմ

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***Մ.Բալոյան***

«04» դեկտեմբերի 2014թ.

գ. Վարդաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Վարդաղբյուրի համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 14-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասչորս հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասչորս հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար մեկ հարյուր դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տաս հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երկու հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ երկու հազար դրամ.

4) մեկ ամսվա համար՝ տաս հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ յոթանասունհինգ հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հարյուր դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում յոթանասունհինգ հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է յոթ հազար դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական

ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ մեկ հազար

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ,

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հինգ հազար դրամ:

ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» դեկտեմբերի 2014թ. ՀՀ Շիրակի մարզ, գ.Վարդաղբյուր

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուր համայնքի վարչական տարածքում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ տեղական տուրք վճարող օբյեկտների անվանումը եվ դրույքաչափերը

Տեղական տուրք վճարող օբյեկտի անվանումը	*Տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար դրամ*	*Տեղական տուրքը ընթացիկ տարվա համար դրամ*
«Սիմոնյանների դղյակ» ՍՊԸ		
1/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար հիմնական շինությունների ներսում	2000	8000
2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	14000	56000
3/ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար	14000	56000
ԸՆԴԱՄԵՆԸ՝	30 000	120 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ն

«02» դեկտեմբերի 2014 թվական Գյուղ Վարդաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի 2015 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Թոսունյան՝ կողմ

Ա.Թոսունյան՝ կողմ

Դ.Խաչատրյան՝ կողմ

Ա.Սարգսյան՝ կողմ

Մ.Բալոյան՝ կողմ

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***Սարգիս Բալոյան***

«04» դեկտեմբերի 2014թ.

Գյուղ Վարդաղբյուր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Վարդաղբյուրի համայնքի
ավագանու 2014 թվականի դեկտեմբերի
02-ի թիվ 15-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

№	Անվանումը	Հազար դրամ
1.	Հողի հարկ	811,0
2.	Գույքահարկ տրանսպորտ	130,7
3.	Վարձակալական հողերի հարկ	1000,0
4.	Տեղական տուրք	120,0
5.	ՀՀ պետական բյուջեից համայնք. սկզբունքով տրամադրվող այլ դոտացիաներ	307,5
6.	Բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	3500,0
	Ընդամենը եկամուտներ	**5869,2**

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

№	Հոդված	Անվանումը	Հազար դրամ
1.	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4310,0
2.	4212	Էլ.էներգիա	96,2
3.	4221	Ներքին գործուղում	100,0
4.	4232	Համակարգչային ծառայություններ	24,0
5.	4234	Տեղեկատվական ծառայություններ	20,0
6.	4214	Գրասենյակային նյութեր	100,0
7.	4264	Տրանսպորտային ծախսեր	100,0
8.	4269	Հատուկ նպատակային նյութեր	300,0
9.	4891	Պահուստային ֆոնդ	819,0
		Ընդամենը ծախսեր	**5869,2**

Վարդաղբյուրի համայնքի ղեկավար՝ ***ՍԱՐԳԻՍ ԲԱԼՈՅԱՆ***